2023, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (622)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց բանակի օրվա առիթով

(28 հունվարի 2023 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում Հայոց բանակի սպաներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:

Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախության վերահաստատման տարիներին, դարձավ պատվարն ու պահապանը հայոց վերածնյալ պետականության, երաշխավորը մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կյանքի: Մեր խիզախ զորավարների ու զինվորների քաջագործություններով, նաեւ բանակին սատարող մեր ժողովրդի պայքարով ազատագրվեց Արցախ աշխարհը, եւ արցախահայությունն իր անկախ կյանքը կառուցելու հնարավորությունն ունեցավ:

Արցախյան 44-օրյա աղետալի պատերազմը, անցյալ տարվա սեպտեմբերին Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգությունները, հառնած մարտահրավերները եւ պաշտպանական լրջագույն հիմնահարցերը նոր հրամայականների առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին: Այս ծանր իրավիճակում առաջնային եւ հրատապ է բանակի արդիականացումը՝ ժամանակի չափանիշներին ու պահանջներին համապատասխան: Առաջնային եւ հրատապ է ազգային ողջ ներուժի համախմբումը, որպեսզի Հայոց բանակը շուտափույթ հաղթահարի պատերազմի պատճառած աղետալի հետեւանքները, ամոքում գտնեն անդառնալի կորուստների վերքերն ու ցավերը, եւ բացառվեն այնպիսի ողբերգություններ, որ ապրեցինք շաբաթներ առաջ: Հավատում ենք, որ Հայոց բանակը պիտի վերագտնի փառքի իր ճանապարհը եւ կարող լինի աննկուն ու հաղթական իրագործել իր սրբազան առաքելությունը:

Ի խորոց սրտի աղոթում ենք հայրենիքի պաշտպանության համար նահատակության պսակն ընդունած բոլոր քաջորդիների համար: Հայցում ենք Երկնավորից, որ մխիթարություն պարգեւի կորուստներից ու վշտերից բեկված հոգիներին: Թող ամենակալն Աստված Իր պահպանությունն ու զորակցությունը շնորհի Հայոց բանակի քաջարի զինվորներին ու հրամանատարական կազմին, խաղաղություն ու բարօրություն՝ Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ» (Հռոմ. Ա 7) այսօր եւ միշտ. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունվարի 19-ին **Մեքսիկա–Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեքսիկա–Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությանը՝ խմբի ղեկավար Բերենիսե Խուարես Նավառատեի գլխավորությամբ:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Մեքսիկայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմելլա Շաքարյանը եւ ՀՀ-ում Մեքսիկայի պատվավոր հյուպատոս Նիկոլայ Կոստանդյանը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ պատվիրակության այցը Հայաստան առավել կամրապնդի երկու երկրների բարեկամական հարաբերությունները տարբեր ոլորտներում: Վերհիշելով հայրապետական իր այցը Մեքսիկա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գոհունակությունը հայտնեց հայկական համայնքի նկատմամբ Մեքսիկայի իշխանությունների հոգատար վերաբերմունքի համար:

Անդրադառնալով տարածաշրջանում տիրող ծանր իրավիճակին եւ Ադրբեջանի կողմից Բերձորի (Լաչինի) միջանցքի արգելափակմանը՝ Նորին Սրբությունն իր մտահոգությունը հայտնեց Արցախի ժողովրդի խաղաղ ու ազատ ապրելու իրավունքի դեմ նոր ոտնձգությունների եւ դրանց հետեւանքով ստեղծված հումանիտար աղետի առնչությամբ: Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց միջազգային հանրության հետեւողական գործուն քայլերը Լաչինի միջանցքի վերաբացման ուղղությամբ:

Իր խոսքում խմբի նախագահ Բերենիսե Խուարես Նավառատեն կարեւորեց ջանքերի գործադրումը հանուն տարածաշրջանում խաղաղության հաստատման եւ ապահով կյանքի իրավունքի պաշտպանության:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նաեւ տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի աշխատանքների վերաբերյալ, որոնք տարվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնված տարածքներում Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության եւ Լաչինի միջանցքի վերաբացման ուղղությամբ:

Հունվարի 26-ին **Հայորդյաց տների պատասխանատուներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հովանու ներքո գործող հայորդյաց տների տնօրեններին ու փոխտնօրեններին:

Հանդիպման սկզբում հայորդյաց տների կենտրոնական գրասենյակի տնօրենի պաշտոնակատար տիար Հայկ Գազազյանը հայորդյաց տների պատասխանատուների, ուսուցիչների ու սաների անունից Սուրբ Ծննդյան առիթով շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ երախտագիտություն հայտնելով հայորդյաց տների հանդեպ ցուցաբերվող հայրական խնամքի ու հոգածության համար:

Այնուհետեւ իր օրհնության եւ գնահատանքի խոսքը ներկաներին ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ մեծապես կարեւորելով հայորդյաց տների առաքելությունը:

Անդրադառնալով հայորդյաց տների 30-ամյա գործունեությանը՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ բազմաթիվ հայորդիներ բացահայտել ու զորացրել են իրենց ձիրքն ու շնորհները՝ հետագայում դրանք ծառայեցնելով հայրենիքի ու Եկեղեցու շենացմանը:

Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց նաեւ հայորդիների մեջ քրիստոնեական կրթության ու դաստիարակության շնորհիվ աստվածասիրության եւ հայրենասիրության կերտումը:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց հայորդյաց տների ղեկավար կազմին, մանկավարժներին՝ նախաձեռնիր եւ հետեւողական գործունեության համար:

Զրույցի ընթացքում քննարկվեցին նաեւ հայորդյաց տների կրթական գործընթացի արդյունավետության առավել բարձրացմանն առնչվող հարցեր:

Հանրապետական մաղթանք Հայոց բանակի օրվա առիթով

Հունվարի 28-ին, Հայոց բանակի օրվա կապակցությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննես մատուռ-մկրտարանում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Հայաստան աշխարհի խաղաղության, անսասանության եւ Հայոց բանակի հաղթական առաջընթացի համար:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի պաշտպանության նահատակված քաջորդիների հիշատակին եւ աղոթք բարձրացնելու նրանց հոգիների հանգստության համար:

Նորին Սրբությունն ու եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

Սուրբ Պատարագ եւ ընդունելություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Բանակի օրվա առիթով

Հունվարի 29-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը, բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներ:

Սուրբ պատարագի ընթացքում Մովսես վարդապետը, խոսելով մեր կյանքում առկա դժվարությունների ու փորձությունների մասին, ընդգծեց, որ Տերը մեզ պատգամում է՝ «Մի՛ վախեցեք» (Հովհ. Զ 20), քանզի վախը հաղթահարելով՝ ապագայի հույսով, հավատով ու ապաշխարությամբ կկարողանանք հասնել փրկության նավահանգիստ:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ պատարագիչ հայր սուրբը մասնավորաբար նշեց. «Հայոց անկախ պետականության մեջ պատերազմների արհավիրքներով, մեծագույն փորձություններով, կորուստների ու ձեռքբերումների բովով անցած Հայոց բանակն այսօր տոնում է կազմավորման 31-ամյակը: Բոլորս վստահ գիտակցում ենք, որ մեր պետականության, անկախության, անվտանգության գլխավոր երաշխիքն ու հենարանը Հայոց բանակն է»:

Վերջում հայր Մովսեսն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տերն ուժ եւ իմաստություն պարգեւի Հայոց բանակի յուրաքանչյուր զինծառայողի՝ ականջալուր լինելու աստվածային «Մի՛ վախեցիր» կոչին, պայքարի ոգով լցվելու, վճռական եռանդով գործելու, քաջությամբ հաղթահարելու փոթորիկներն ու դժվարությունները՝ հանուն վաղվա հաղթանակների:

Սուրբ պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան կարգ հայրենյաց պաշտպանության մարտերում զոհված քաջարի հայորդիների հոգիների խաղաղության ու հանգստության համար:

Ապա «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բանակի օրվա կապակցությամբ, ի դեմս ներկաների, իր օրհնությունը փոխանցեց ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայակազմին, զինվորներին ու գնդերեցներին:

Նորին Սրբությունն ի մասնավորի անդրադարձ կատարեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային մարտահրավերներին, պատերազմի աղետալի հետեւանքներին եւ դրանց հաղթահարման ու դիմագրավման գործում Հայոց բանակի կարեւոր առաքելությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր օրհնությունը, գնահատանքն ու սերը փոխանցեց Հայոց բանակի հրամանատարներին եւ զինվորներին՝ մաղթելով Աստծու օգնականությունն ու պահպանությունը, քաջառողջ կյանք եւ արդյունաշատ առաքելություն՝ ի շինություն հայրենիքի եւ մեր ազգի բարօր կյանքի:

Զինվորականության անունից ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ՀՀ ԶՈՒ նկատմամբ դրսեւորվող մշտական հոգածության եւ ուշադրության համար՝ հավաստիացնելով, որ ՀՀ ԶՈՒ սպայական կազմը պատրաստակամ է շարունակելու իր առաքելությունը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանության եւ անվտանգության խնդիրների լուծման գործում:

Ի Տեր ննջեց նվիրյալ հայորդի Հայկ Տիտիզյանը



Ի Տեր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեծանուն բարերար, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշանակիր, «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոսակիր, նվիրյալ հայորդի տիար Հայկ Տիտիզյանը:

Լուսահոգի Հայկ Տիտիզյանը՝ որպես ազգասեր ու եկեղեցանվեր հայորդի, մեծ նախանձախնդրությամբ մշտապես իր զորակցությունն է բերել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառությանն ու շինությանը, աջակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգօգուտ, եկեղեցանվեր նախաձեռնությունների իրականացմանը:

Տիտիզյան բարեպաշտ ընտանիքը մեծապես աջակցել է Հայ Եկեղեցու բարեսիրական տարբեր ծրագրերի իրագործմանը, սատարել հոգեւորականաց պատրաստությանն ու հայապահպանության առաքելությանը, ինչի խոսուն վկայությունն է Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա-ի անվան կրթական կենտրոնի եւ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Սուրբ Ներսես ընծայարանի նոր համալիրի կառուցումը:

Հոգելույս Հայկ Տիտիզյանը տարբեր բարեգործություններով իր զորակցությունն է բերել հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին: Կարեւոր ներդրում է ունեցել համավարակի շրջանում Մայր Աթոռի սոցիալական ծրագրերի իրականացման գործում, ինչպես եւ մեծապես օժանդակել է Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի հիմնանորոգությանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունն իրենց խոր վշտակցությունն ու զորակցությունն են հայտնում Տիտիզյան սգակիր ընտանիքին եւ աղոթում հոգելույս Հայկ Տիտիզյանի հոգու խաղաղության ու հանգստության համար:

Խունկ, աղոթք եւ օրհնություն ննջեցյալի բարի հիշատակին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մեծ Բրիտանիա

Հունվարի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական կարճատեւ այցով մեկնեց Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հայոց թեմ:

Նորին Սրբությանն ուղեկցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի եւ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Իրանի նախագահին

Հունվարի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Իբրահիմ Ռաիսիին՝ Իրանի Խոյ քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի կապակցությամբ:

«Խոր ցավով տեղեկացանք Իրանի Խոյ քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի մասին, որի հետևանքով կան ավերվածություններ, զոհեր եւ վիրավորներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ցավակցությունն ու աղոթական զորակցությունն ենք բերում Ձեզ, Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությանը եւ Իրանի համայն ժողովրդին»,– նշել է Վեհափառ Հայրապետն իր ցավակցագրում:

Նորին Սրբությունը Երկնավորի մխիթարությունն է հայցել բոլոր սգակիրներին եւ առողջություն մաղթել երկրաշարժից տուժած վիրավորներին:

Մայր Աթոռի իրավախորհրդատվական հանձնախմբի ֆնարկումը

Հունվարի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռի իրավախորհրդատվական հանձնախմբի նիստը: Նիստին քննարկվեցին Արցախի շրջափակման պայմաններում Եկեղեցու կողմից իրականացվող քայլերի՝ մասնավորաբար իրավական անհրաժեշտ գործիքների կիրառման, ինչպես նաեւ առաջիկա անելիքների հետ կապված հարցեր:

Զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը՝ արձանագրելով, որ դեկտեմբերի 12-ից Արցախը Հայաստանի հետ կապող Բերձորի (Լաչինի) միակ ճանապարհի արգելափակման հետեւանքով արցախահայությունը շարունակում է մնալ հումանիտար աղետալի իրավիճակում: Բնապահպանական կեղծ պատճառաբանություններով ոտնահարվում են Արցախի հայերի տեղաշարժի, սնունդ ու բժշկական աջակցություն ստանալու եւ կենսական մյուս իրավունքները:

Ներկայացվեցին ճգնաժամային նման իրավիճակում Վեհափառ Հայրապետի եւ Մայր Աթոռի իրականացրած աշխատանքները, մասնավորապես անդրադարձ կատարվեց այն հանգամանքին, որ դեռեւս դեկտեմբերի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշյալ հարցի վերաբերյալ մի շարք գրություններով դիմել է քույր եկեղեցիների պետերին ու միջազգային կառույցներին՝ աջակցելու արցախահայությանը: Նորին Սրբությունն արձանագրել է, որ Արցախը, մնալով շրջափակման մեջ, կանգնած է հումանիտար աղետի առջեւ: Նորին Սրբության կոչին ի պատասխան՝ արձագանքներ են ստացվել Ռուս Եկեղեցու հոգեւոր պետի, Հռոմի սրբազան քահանայապետի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Եվրոպական Եկեղեցիների խորհրդի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարների կողմից:

Միաժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արցախի արգելափակման առնչությամբ մի շարք հանդիպումներ է ունեցել պետական, քաղաքական, միջազգային եւ դիվանագիտական տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

Նորին Սրբությունը շրջաբերական գրությամբ դիմել է նաեւ Հայաստանի ու Սփյուռքի բոլոր թեմերի առաջնորդներին առ այն, որ թեմական, համայնքային, ազգային կառույցների ջանքերի համադրմամբ Արցախում ստեղծված աղետալի իրավիճակի խնդիրը բարձրացվի ու ներկայացվի պետական, միջազգային, դիվանագիտական ու մարդասիրական պատկան կառույցների եւ կազմակերպությունների առջեւ:

Զեկույցի ավարտին ծավալվեց մտքերի փոխանակում, ներկայացվեցին առաջարկներ, որոնք կյանքի կկոչվեն առաջիկայում: Առանձնակի ընդգծվեց արցախահայությանը սննդով եւ կենսական անհրաժեշտության պարագաներով ապահովելու կարեւորությունը:

Վերջում Նորին Սրբությունը, ամփոփելով խորհրդակցության արդյունքները, համապատասխան հանձնարարականներ տվեց Մայր Աթոռի պատկան կառույցների ղեկավարներին՝ արձանագրելով, որ Հայոց Եկեղեցին շարունակելու է գործադրել հնարավոր բոլոր ջանքերը՝ հումանիտար ճգնաժամը հաղթահարելու եւ արցախահայության՝ հայրենի հողում ազատ ու անկախ ապրելու իրավունքը պաշտպանելու:

Խորհրդակցության ավարտին Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված աշխարհի խաղաղության եւ Հայաստանի ու Արցախի անվտանգ եւ ապահով կյանքի ու համայն հայ ժողովրդի բարօրության համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցությունը հրդեհից զոհված զինծառայողների ընտանիքներին

Լուր ցավով տեղեկացանք ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհված 15 զինծառայողի եւ երեք վիրավորի մասին:

Մեր ցավակցությունն ու վշտակցությունն ենք հայտնում զոհվածների ընտանիքներին եւ հայցում Սուրբ Հոգու մխիթարությունն ու զորակցությունը նրանց վշտացյալ սրտերին: Աղոթում ենք առ ողորմածն Աստված, որ բարեգութ Տերը երկնքի լուսեղեն օթեւաններում հանգստության մեջ ընդունի հոգիները մեր զոհված զավակների:

Թող բարերար Աստված շուտափույթ ապաքինում պարգեւի վիրավոր զինծառայողներին:

Հայցում ենք, որ ամենակալ Տերն Իր սուրբ աջով խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը՝ զերծ պահելով մեր ժողովրդին նման ողբերգություններից:

Հունվարի 22-ին՝ հընթացս սուրբ եւ անմահ պատարագի, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Մայր Աթոռի միաբանությունն ու ներկա հավատացյալներն աղոթք բարձրացրին առ Աստված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհված զինծառայողների հոգիների խաղաղության եւ հանգստության համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նույն օրը՝ հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան կարգ կատարվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի առաջնորդանիստ եկեղեցիներում:

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

Սկիզբը՝ 2022-ի թիվ 22–24

Խաչին նվիրված շարականների վրա «Բարձրացուցէք»-ի ունեցած մեծ ազդեցության մասին նշում են Գ. Ավետիքյանը, Մ. Աբեղյանը եւ Ն. Թահմիզյանը: Մ. Աբեղյանն իրավացիորեն նկատում է, որ Խաչի շարականների առանձին տները բովանդակությամբ եւ պատկերներով գրեթե չեն տարբերվում Դավիթ Անհաղթի Ներբողից՝ համարելով, որ այդ ազդեցությունը սահմանափակում է բանաստեղծին: Մինչդեռ Ն. Թահմիզյանն ընդունելով, որ գործածված պատկերները շարականագրի երեւակայության արգասիքը չեն, կարեւորում է այն, որ «բանաստեղծական ապրումը միանգամայն անկեղծ ու առինքնող է Զորոփորեցու շարականներում. զգայական աշխարհը՝ ջերմ ու անմիջական, բովանդակությունը՝ վսեմ, լեզուն՝ հարուստ, մաքուր, հղկված, ձեւը՝ կոկ եւ ավարտուն»:

Իհարկե, չի կարելի պնդել, որ Խաչին նվիրված ստեղծագործությունների հեղինակները բոլոր դեպքերում իրենց գաղափարները վերցրել են «Բարձրացուցէք»-ից, քանի որ Դավիթ Անհաղթը եւս հաճախ օգտվել է Ընդհանրական Եկեղեցու հայրերի երկերից ու գրվածքներից: Սակայն «Բարձրացուցէք»-ի՝ միջնադարում այդքան տարածված եւ անգամ վարդապետարանների ուսումնական ծրագրերում ներառված լինելը հիմք է տալիս պնդելու, որ միջնադարյան հեղինակները Խաչին (եւ ոչ միայն) նվիրված ստեղծագործություններ գրելիս աչքի առջեւ անպայման ունեցել են Դավիթ Անհաղթի Ներբողը:

Մաս Ե. Դավիթ փիլիսոփայի՝ Խաչին նվիրված Ներբողի պատճառները (Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան)

Ստեղծմանը հաջորդող դարերի ընթացքում «Բարձրացուցէք»-ը կարեւոր դեր է ունեցել հայ մատենագրության մեջ: Այս երկի ու նրա հեղինակի հանդեպ հետաքրքրությունն աճեց հատկապես ԺԲ–ԺԳ դդ., երբ ստեղծվեցին Ներբողի առանձին պատճառները եւ մեկնությունները: Պատճառը մեկնողական գրականության մի տեսակ է՝ նախակրթություն, որում վերլուծվում եւ պարզաբանվում է տվյալ աստվածաբանական կամ փիլիսոփայական երկի ստեղծման ժամանակը, շարժառիթը, հեղինակային պատկանելությունը: Այն յուրօրինակ մուտք էր մինչեւ բուն մեկնությանն անցնելը:

«Բարձրացուցէք»-ի պատճառները կարեւոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն Դավիթ Անհաղթ փիլիսոփայի կյանքի, գործունեության, Ներբողի գրության շարժառիթների եւ բովանդակության մասին, այլ նաեւ հետաքրքիր վկայություններ են հաղորդում Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտների, հայ դպրության սկզբնավորման եւ Ե դարի Հայոց պատմության այլ հարցերի վերաբերյալ:

Պատճառներից հնագույնը՝ «Սկիզբն բարեպաշտութեան Հայաստանեայց ունիմք իմանալ....» սկսվածքով, զետեղված է Ս. Ներսես Շնորհալու հեղինական «Բարձրացուցէք»-ի ընդարձակ մեկնության սկզբում, բայց հաճախ ձեռագրերում հանդես է գալիս որպես առանձին միավոր՝ այս դեպքում կրելով Վարդան Վարդապետի անունը:

Հայտնի է, որ Ս. Ներսես Շնորհալին եւ Վարդան Հաղբատեցին մատենագրական սերտ համագործակցություն են ունեցել: Ս. Ներսես Շնորհալին վերջինիս խնդրանքով է գրել «Բարձրացուցէք»-ի մեկնությունը, ինչպես նաեւ տաղաչափել այն: Միանգամայն հավանական է Ն. Ակինյանի այն կարծիքը, որ Վարդան Հաղբատեցին գրել է «Բարձրացուցէք»-ի Պատճառը եւ զետեղել Ս. Ներսես Շնորհալու Մեկնության սկզբում: Ամենայն հավանականությամբ այս հանգամանքով է պայմանավորված ձեռագրերում նշյալ Պատճառի՝ ինչպես Ս. Ներսես Շնորհալու, այնպես եւ Վարդան Վարդապետի անունով տարածված լինելը: ➥ *էջ 4*

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գեւորգ Ե Սուրենյանցի

Պատմությամբ հաստատագրված իրողություն է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ազգապահպան առաքելություն է իրականացրել: Տարբեր շրջափուլերում՝ մասնավորապես հայոց ազգի եւ պետականության համար օրհասական պահերին, անձնվեր գործունեություն են ծավալել հայ հոգեւոր առաջնորդներն ու հայրերը. իր ազգանվեր գործունեությամբ անուրանալի ավանդ ունի Գեւորգ Սուրենյանցը:

Գեւորգ Սուրենյանցը ծնվել է 1847 թ. օգոստոսի 28-ին Թիֆլիսում՝ ազնվականի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Կարապետ վարժապետ Բելախսյանի ուսումնարանում, այնուհետեւ ուսումը շարունակել է Դավիթ Արզանյանի պանսիոնում. ուսումնասիրել է հայերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն: Ավարտել է Թիֆլիսի արական դասական գիմնազիան (1868 թ.): Ցանկանալով ծառայել եկեղեցում՝ Թիֆլիսից մեկնել է Ս. Էջմիածին: Իր աշխատասիրությամբ եւ կարգապահությամբ արժանացել է Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու (1866–1882 թթ.) ուշադրությանը: 1868 թ. դեկտեմբերի 15-ից Գեւորգ Սուրենյանցը համալրել է Մայր Աթոռի միաբանության շարքերը: 1871 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա (աբեղա), իսկ 1872-ին արժանացել է վարդապետական աստիճանի: 1874 թ. ծառայության է կոչվել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում՝ որպես ուսուցիչ: 1875 թ. հոկտեմբերին Գեւորգ վրդ. Սուրենյանցն ստանձնել է Արցախի թեմի առաջնորդի եւ թեմական դպրոցների տեսչի պաշտոնը: 1877-ին եղել է Ագուլիսի Ս. Թովմա առաքյալ վանքի վանահայրը, իսկ 1878-ից՝ Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդը: 1881 թ. Գեւորգ վրդ. Սուրենյանցը նշանակվել է Երեւանի փոխթեմակալ: Այս ընթացքում ծավալել է եկեղեցանվեր եւ ազգանպաստ գործունեություն: 1882 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1886 թ. Գեւորգ եպս. Սուրենյանցը նշանակվել է Աստրախանի թեմի, իսկ 1894-ին՝ Վրաստանի թեմի առաջնորդ: Գեւորգ եպս. Սուրենյանցի առաջնորդության տարիներին նորոգվել են թեմական եկեղեցիները, կառուցվել նորերը: Նրա ջանքերով բացվել են նոր դպրոցներ, ուսումնական հաստատություններ:



1907 թ. նշանակվել է կաթողիկոսական տեղապահ: Գեւորգ Ե Սուրենյանցը հովվապետեց 1911–1930 թթ.՝ մարտահրավերներով ու խնդիրներով լի մի շրջափուլում: Հայ ժողովուրդն անցնում էր խավար եւ դժգույն մի ճանապարհով. անհրաժեշտ էր Հայկական հարցը բարձրացնել միջազգային ատյաններում, ինչը եւ իրագործվում է նորաօծ կաթողիկոսի ջանքերով: 1912 թ. Գեւորգ Ե Սուրենյանցի նախաձեռնությամբ կազմվում է հայ ազգային պատվիրակություն՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ, որի նպատակը Հայ դատը եվրոպական երկրների կառավարությունների առջեւ պաշտպանելն էր:

Պատերազմական գործողությունների պայմաններում Հայոց հայրապետին խիստ մտահոգում էր Կովկասի փոխարքայության սահմաններում բնակվող արեւմտահայերի ծանր վիճակը:

1915 թ., երբ սկսվում են զանգվածային կոտորածները, արեւմտահայերը դիմում

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

⬅ էջ 3

Վարդան Հաղբատեցին իր Պատճառն սկսում է Ս. Գրիգոր Լուսավորչից, խոսվում է Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի գործունեության, հայոց աստվածապարգեւ նշանագրերի, հայ դպրության սկզբնավորման մասին, թե ինչպես ընտրվեցին ուշեղ եւ փափկաձայն պատանիներ, որոնցից ոմանք ուղարկվեցին Աթենք՝ հունարեն, իմաստասիրություն ուսանելու եւ թարգմանություններ կատարելու նպատակով: Այնուհետեւ թվարկվում են տարածված կարծիքներն այն մասին, թե ինչպես է Դավիթ փիլիսոփան ստեղծել Խաչին նվիրված ներբողը: Ներկայացվում է տարածված ավանդույթը. Աթենքում յոթ տարի ուսանելուց հետո վարդապետի հրամանով աշակերտը պետք է բարձրանար մի բարձր տեղ եւ «խաւսեր բանս հանճարականս ըստ ժամանակին եւ ըստ պիտոյից լսաւղացն»: Դավիթը կանգնում է Սուրբ Խաչի առջեւ ու արտասանում իր Ներբողը՝ «յուրախութիւն լսաւղաց եւ ի պատիւ Խաչին»: Հաջորդիվ ներկայացվում են մյուս տեսակետները, թե իբր Ներբողն արտասանվել է Խաչվերացի տոնին՝ Կ. Պոլսում, կամ Երուսաղեմում՝ Գողգոթայում՝ Ս. Խաչի առջեւ, կամ էլ Փրկչի խաչափայտը պարսկական գերությունից ազատագրելու առիթով:

Սակայն Վարդան Հաղբատեցին այս բոլոր տեսակետները համարում է ստահոդ եւ իբրեւ ճշմարիտ տեսակետ՝ վերաշարադրում Նախադրության տեղեկությունները Դավիթ փիլիսոփայի կյանքի եւ Ներբողի գրության վերաբերյալ (այս մասին տես Մաս Ա): Նշվում է, որ Դավիթ Անհաղթը Հարք գավառի Հերեթ գյուղից էր՝ Մովսես Քերթողի աշակերտը եւ մեկը նրանցից, ովքեր ուղարկվեցին հելլենական կրթություն ստանալու:

Ժամանակագրական տեսակետից հաջորդ Պատճառը պահպանվել է ԺԳ կամ ԺԴ դդ. թվագրվող եզակի եւ ուշագրավ մի գրչագրում, որը հնախուզական ուղեւորության ընթացքում Հաղբատ գյուղի Զառնի կոչվող այրում հայտնաբերել է Գյուտ քհն. Աղանյանցը: Ձեռագրի թերթերը խոնավությունից մաշված են եղել, սակայն Գյուտ քհն. Աղանյանցը կարողացել է վերծանել բնագրի որոշ հատվածներ: Այն կրում է հետեւյալ խորագիրը. «Դաւթի փիլիսոփայի ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսի ասացեալ եւ զպատճառն անընթեր եդեալ Դաւիթ քահանա[յ]ի»: Դավիթ քահանան ամենայն հավանականությամբ Վարդան Հաղբատեցու աշակերտ Դավիթ Քոբայրեցին է: Օգտվելով հիմնականում Վարդան Հաղբատեցու Պատճառից՝ Դավիթ Քոբայրեցին գործածել է նաեւ այլ աղբյուրներ՝ առավել մանրամասն ներկայացնելով որոշ տեղեկություններ: Նա նույնպես գրում է գրերի գյուտի եւ հայ դպրության սկզբնավորման մասին՝ հավելելով, որ Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը Թեոդոս կայսեր եւ Հայոց Վռամշապուհ արքայի հրամանով ամենուրեք դպրոցներ կարգեցին: Ինչպես վերը նշվեց, ըստ Վարդան Հաղբատեցու՝ աշակերտներից կատարելագույներն ուղարկվեցին Աթենք՝ հունական կրթություն ստանալու, մինչդեռ Դավիթ Քոբայրեցին հավելում է Բյուզանդիան եւ Ալեքսանդրիան, ինչպես նաեւ շեշտում ոչ միայն հունարեն, այլեւ ասորերեն ուսանելու մասին: Ի տարբերություն Վարդան Հաղբատեցու՝ Դավիթ Քոբայրեցին հստակ նշում է, որ Գյուտ Ա Արահեզացին (461–478 թթ.) է պատվիրել Դավիթ փիլիսոփային գրել Խաչին նվիրված ներբողը, իսկ «ի ծերութեան հասեալ ժամանակ» արտահայտությունը վկայում է, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել նշյալ կաթողիկոսի հովվապետության վերջին շրջանում: Այս Պատճառում եւս որպես Ներբողի գրության հիմնական առիթ է նշվում Հայաստանում նեստորականների գործունեությունը:

Գրիգոր Աբասյանի կազմած «Գիրք պատճառաց» պայմանական վերնագիրը կրող ժողովածուում «Սկիզբն եւ պատճառ Բարձրացուցեացն եւ տեսութիւն»-ը քաղել է Դավիթ Քոբայրեցու Պատճառից, կատարել որոշ կրճատումներ եւ հավելումներ՝ օգտվելով նաեւ Վարդան Հաղբատեցուց, Ներբողի Նախադրությունից եւ այլ աղբյուրներից: Սկզբում հեղինակը մեկ նախադասությամբ ամփոփում է քրիստոնեական վարդապետությունը՝ ընդգծելով աստվածային տնօրինության կարեւորագույն հանգրվանները՝ աշխարհի արարումը եւ մարդու ստեղծումն Աստծու պատկերով, դրախտային կյանքի վայելքը, դրախտից վտարումը, մահը, երկրորդ Ադամի՝ Քրիստոսի աշխարհ գալը եւ մարդկության ազատագրումը մահից: Այնուհետեւ անդրադառնում է Թադեոս առաքյալի միջոցով Հայաստանում քրիստոնեության տարածմանը, Ս. Գրիգոր Պարթեւի լուսավորչական գործունեությանը: Նա մեծագույն ակնածանքով է խոսում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի եւ Վռամշապուհ արքայի մասին, ներկայացնում աստվածային տեսիլքով ոչ միայն հայոց, այլ նաեւ վրաց եւ աղվանից գրերի ստեղծումը: Գրիգոր Աբասյանը քննում է, թե ինչպես են մարդիկ ձեռք բերել գրելու շնորհը. Ադամի՝ դրախտից վտարումից հետո բոլորը մի գիր ունեին. ըստ ոմանց՝ եբրայերեն, ըստ մյուսների՝ արաբերեն: Երբ Բաբելոնի աշտարակաշինությունից հետո խառնվեցին լեզուները, գրերը նույնպես զանազանվեցին իրարից: Պատճառի ներածական մասը, որն ամփոփ ներկայացնում է աշխարհի եւ քրիստոնյա Հայաստանի պատմության կարեւոր հանգրվանները, ավարտվում է Մեսրոպ Մաշտոցի՝ մանուկների հավաքագրման եւ հայոց գրերի ուսուցման պատմությամբ:

Նշյալ բոլոր պատճառներում քննվում է, թե ինչ պայմաններում, երբ եւ որտեղ է գրվել «Բարձրացուցէք»-ը: Հեղինակներն աներկբա ընդունում են այն փաստը, որ նշյալ ստեղծագործությունը գրել է Ե դարում ապրած, Գյուտ Ա Արահեզացի եւ Հովհան Ա Մանդակունի կաթողիկոսների օրոք գործած Դավիթ փիլիսոփան՝ Հարք գավառի Հերեթ («Գիրք պատճառաց»-ում՝ Հերթեւն) գյուղից, Մովսես Խորենացու աշակերտն ու գործակիցը: Գրեթե նույն ժամանակաշրջանում ապրած հեղինակների (Վարդան Հաղբատեցին եղել է Դավիթ Քոբայրեցու, իսկ վերջինս՝ Գրիգոր Աբասյանի ուսուցիչը) ստեղծած եւ ուշագրավ տեղեկություններ պարունակող՝ Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Բարձրացուցէք»-ի տարբեր պատճառների առկայությունը վկայում է միջնադարում այս երկի եւ նրա հեղինակի հանդեպ եղած մեծ հետաքրքրության մասին:

Շարունակելի

Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ազգանվեր գործունեությունը

են Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շուտափույթ օգնություն խնդրելով: Գեւորգ Ե Սուրենյանցն իսկույն դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմմանուել Գ-ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազանովին, Անգլիայի թագավոր Գեւորգ Ե-ին, Ֆրանսիայի նախագահ Ռ. Պուանկարեին, ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ խնդրելով պաշտպանություն եւ հովանավորություն: Նա միաժամանակ հեռագրում է իր լիազոր ներկայացուցիչ Պողոս Նուբարին՝ առաջարկելով մեկնել Եվրոպա, անձամբ հանդիպել պաշտոնատար անձանց հետ եւ իր անունից օգնություն խնդրել արեւմտահայերի համար («Արարատ», 1915, թիվ 2–3, էջ 170–178): Արեւմտահայության զանգվածային տեղահանությունները վերածվում էին դժոխային կոտորածների, որոնց նախորդում էին հակահայկական հրապարակախոսությունները: Թուրքերին ու քրդերին գայթակղում էին հայերի ունեցվածքով, նրանց զբաղեցրած տարածքով: 1915 թ. ապրիլի 15-ին օսմանյան կառավարական գաղտնի նիստում որոշում է կայացվում ժողովրդին կոտորել Արաբիայի անապատում՝ հարմար առիթ համարելով բռնկված պատերազմը: Այս հրեշավոր ծրագրի տակ ստորագրում են Թալեաթ, Էնվեր եւ Նազըմ փաշաները: Հայ ժողովրդի վիճակն անհույս է դառնում, երբ ապրիլի 24-ի՝ լույս 25-ի գիշերը թուրք հրոսակախմբերը, անմարդկային կտտանքների ենթարկելով, կոտորում են հայ մտավորականներին եւ Մեջլիսի հայ պատգամավորներին (տե՛ս *Ռ. Սահակյան*, Ցեղասպանության պատմությունից, Երեւան, 1990, էջ 39): Նրանց թվում էին գրող, իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը, նշանավոր բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Ռուբեն Սեւակը, Սիամանթոն, Արտաշես Հարությունյանը եւ ուրիշներ (տե՛ս *Ա. Օհանջանյան*, 1915 թ. անհերքելի վկայություններ, Երեւան, 1997, էջ 43):

Երիտթուրքական կառավարությունը 1915 թ. հունիսի 15-ին կախաղան է բարձրացնում Հնչակյան կուսակցության 20 անդամի: Եղերական կոտորածները շարունակվում են նաեւ հաջորդ ամիսներին: Երկրի «մաքրագործումը» հայ ազգաբնակչությունից տեւում է մինչեւ 1915 թ. նոյեմբերը: Հայերի աքսորը դեպի Դեյր-Էլ-Զոր քաղաքի շրջակա անապատը եւ զանգվածային ջարդը նույն եղանակով ու միաժամանակ են իրականացվում Օսմանյան կայսրության գրեթե ողջ տարածքում: Ցավալին այն է, որ իրենց անմարդկային ոճրագործությունների մասին ամենատպավորիչ կերպով հենց իրենք՝ թուրքերն են պատմում. թուրք նախարար Հ. Ռեֆիկը, որը նաեւ երիտթուրք պարագլուխներից էր, գրում է. «....ավելի քանդեցին, քան շինեցին, մեկ հոգու բարիք էին անում, 5000-ի սիրտն էին կծում, մեկի կյանքն էին փրկում, 5000 անմեղների արյուն էին ծծում, մեկ բարիքի դիմաց հազար չարիք էին հասցնում: Ժամանակ եղավ, որ մեռելների ոսկորներով ապարանքներ կառուցեցին: Իրենց բարձերը որբերի մազերով լցրեցին.... Սովյալների ճիչը նրանց ավելի որպես երաժշտություն էր հնչում, որբերի արցունքը բաժակների մեջ լցրին.... դրամի տեղը հոգի առան.... նրանց զբոսավայրերը պատերազմի ռազմաճակատներն էին, իսկ դիտարանները՝ մահ սփռող տարածքները, ժամանցի տեղերը՝ հրկիզված վայրերը.... կարդացածները՝ մահավճիռները, գրածները՝ պատերազմական հրահանգները, իսկ ծրագիրները՝ դավադրություն եւ ընդհանուր ջարդերն էին» (*Ս. Պողոսյան*, Հայոց ցեղասպանության պատմություն, հտ. 2, Երեւան, 2008, էջ 351): Ասում էին՝ հայերին իբրեւ թե բնակեցնելու են Բաղդադի երկաթուղուց 24–30 կմ հեռավորության վրա...

Շարունակելի

Մարիամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23

ԺԹ դարի երկրորդ կեսին դպրոցների տեսակների հարցում խառնաշփոթ էր ստեղծվել: Հայկական դպրոցը հանդես էր գալիս հետեւյալ անվանումներով՝ եկեղեցական, վանական, հոգեւոր, ազգային, ծխական, ժողովրդական (տե՛ս *Վ. Երկանյան,* Հայկական մշակույթը 1800–1870 թթ., Կահիրե, 1971, էջ 36): Տարածված էր նաեւ հոգեւորականների եւ խալֆաների միջնորդությամբ կազմակերպվող մասնավորանհատական՝ տնային ուսուցումը: Երբ կազմավորվում էր նոր դպրոցը, նմանօրինակ անկանոն ուսուցումն սկսեց նահանջել, եւ ի հայտ եկան ուսուցման նոր մեթոդներ, որոնք ինչ-որ չափով կանոնակարգում էին կրթության զանգվածային գործընթացը: ԺԹ դարի կեսերից սկսել էր նաեւ իգական դպրոցների կազմավորումը, ինչն առավելաբար զարգացավ 60-ական թվականներին, եւ աղջիկների կրթությունն առավել ամուր հիմքերի վրա դրվեց: Թիֆլիսում 1853 թ., Ախալցխայում 1851–1853 թթ. իգական դպրոցներ բացելու մի շարք փորձեր արվեցին: Պ. Պռոշյանը մեծ կարեւորություն էր տալիս աղջիկների կրթությանը, եւ այդ նպատակով 1861 թ. Թիֆլիսում հիմնում է «Գայանյան» անունով իգական դպրոց, որը, սակայն, երկար չի գոյատեւում: 1864 թ. Պ. Պռոշյանը մասնակցում է Շուշիի Մարիամյան դպրոցի բացմանը, իսկ երկու տարի անց՝ 1866 թ., Պ. Պռոշյանի ջանքերով Երեւանում՝ Պողոս-Պետրոս եկեղեցու գավթում, բացվում է Գայանյան դպրոցը, որտեղ 1867 թ. ուսանում է ընդամենը 14, իսկ 1873-ին՝ 48 աշակերտուհի: Դպրոցը ժամանակին համընթաց զարգանում եւ 1879 թ. վերածվում է իգական միջնակարգ դպրոցի: Թե ինչ առարկաներ են դասավանդվել դպրոցում, Ս. Խուդոյանն այդ մասին տեղեկություններ չի հաղորդում: Ցարիզմի շրջանում, հակառակ մեր պատկերացումների, աշակերտների թիվն ավելին էր, քան դպրոցի գոյության սկզբնական շրջանում, այսպիսով՝ 1881-ին կրթջախն ունեցել է 103, 1888–1889 ուս. տարում՝160, 1895-ին՝ 268 աշակերտուհի (տե՛ս *Ս. Խուդոյան*, Արեւելահայ դպրոցները 1830–1920 թվականներին, Երեւան, 1987, էջ 87):

1850-ական թվականներից սկսած բացվում են Երեւանի Հռիփսիմյան (1850 թ.), Ախալցխայի Եղիսաբեթյան (1870 թ.), Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան (1877 թ.) եւ մի շարք այլ դպրոցներ:

Նշյալ ժամանակաշրջանում, հայկական եւ պետական դպրոցներից բացի, արեւելահայ դպրոցի շրջանակում գործել են նաեւ մասնավոր դպրոցներ, որոնք ուրույն տեղ են ունեցել ոչ միայն հայ, այլ նաեւ ռուս երեխաների կրթության գործում: Իշխանական համապատասխան վերադաս մարմինների թույլտվությամբ՝ անհատ ձեռներեցների ջանքերով կառուցված դպրոցները ռուսական կառավարությունը համարում էր ապօրինի եւ պատասխանատվության էր ենթարկում նմանօրինակ կրթջախի հիմնադրին: Ցարական իշխանությունը ծխական դպրոցները երբեմն ներկայացրել է որպես մասնավոր կրթջախներ, որպեսզի դրանք իր իրավասության ներքո վերցնի: Այս քաղաքականությունը վնասում էր կրթության կազմակերպմանը, քանի որ հետապնդում էր զուտ ազգային եւ քաղաքական շահեր: Հատկանշական է Ռուսաստանի ներքին գործերի նախարարության (մինիստրության) հոգեւոր գործերի ղեկավար կոմս Սիվերսի 1864 թ. ասած հետեւյալ խոսքերը. «....տեղական իշխանությունների միջոցով, բարոյական ազդեցությամբ հայ հասարակություններին մղել ուսումնական հաստատությունների հիմնադրմանը՝ նրանց հատկացնելով դասավանդման ազատություն, որպեսզի դեպի Ռուսաստան ներգրավվեն Թուրքիայի եւ Պարսկաստանի հայ պատանիները» («Положение 11 марта 1836 г. и Эчмиадзинские католикосы под русским владычеством», Исторический очерк, Тифлис, 1904. մեջբերել ենք սույն գրքից՝ *Վ. Երկանյան,* Հայկական դպրոցը 1800–1870 թթ., Երեւան, 1970, էջ 34): Այս քաղաքականությունը դրսեւորվում էր դեռեւս ԺԹ դարի 30-ական թվականներից, իսկ դարի երկրորդ կեսից սկսած՝ այն առավելաբար ընդգծվում է իշխանությունների կողմից: Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ մասնավոր դպրոցները բացվել են այն ժամանակ, երբ փակվել են հայկական ազգային դպրոցները (1885, 1895 եւ 1897 թվականներին): Այս դպրոցները, հակառակ եկեղեցական-ծխական դպրոցների, պահվում էին ոչ թե ժողովրդի, այլ մեծահարուստների դրամական միջոցներով: Երեւանում հայտնի մասնավոր դպրոցների շարքում մեծ դեր եւ նշանակություն է ունեցել Զաքար Տեր-Զաքարյանի դպրոցը, որը գործել է ընդամենը 3 տարի՝ 1856–1859 թթ.: Արդեն նշել ենք, որ մասնավոր դպրոցներ բացելու համար հարկավոր էր ստանալ Ռուսաստանի իշխանական համապատասխան մարմինների թույլտվությունը. Զ. Տեր-Զաքարյանն այս նպատակով խնդրում է նահանգապետին միջնորդել ուսումնական շրջանի հոգաբարձուի մոտ՝ վերոնշյալ դպրոցը բացելու: Թ. Հակոբյանն այս մասին գրում է. «50-ական թվականներին գավառական դպրոցի տեսուչի միջոցով Երեւանում 25 պատանիների համար մասնավոր դպրոց բացելու հայց են ներկայացրել Երեւանի բնակիչ Զաքարիա Տեր-Զաքարովը եւ Կորգանովը.... Կովկասի ուսումնական օկրուգը Զաքարիա Տեր-Զաքարովին եւ Կորգանովին թույլատրում է (1856 թ. սկզբներին) Երեւանում բացել իրենց մասնավոր դպրոցը՝ յուրաքանչյուրը 25 տղաների համար: Սակայն հայտնի չէ, թե արդյոք նրանք բացեցին դպրոցներ, թե ոչ, իսկ եթե բացեցին, ապա ինչքան ժամանակ գոյություն ունեցան դրանք» (*Թ. Հակոբյան*, Երեւանի պատմությունը (1801–1879 թթ.), Երեւան, 1959, էջ 609): Ներկայացված ծրագրի համաձայն՝ իր իսկ ներկայացրած դիմում-խնդրագրում Զ. Տեր-Զաքարյանը գրում է. «....ցանկանում եմ ինձ մոտ բաց անել դպրոցանման նախապատրաստական մասնավոր պանսիոն.... նպատակ ունենալով նրանց (իմա՛ սաներին) նախապատրաստել՝ ընդունվելու Երեւանի գավառական դպրոցի երկրորդ դասարանը, դասավանդելով նրանց կարդալ ու գրել ռուսերեն եւ հայերեն, թվաբանության չորս նախնական գործողությունները եւ երկու լեզուների քերականության առաջին մասը» (*Թ. Հակոբյան,* նշվ. աշխ., էջ 609–610): Զ. Տեր-Զաքարյանին հաջողվել էր ստանալ փոխարքայի թույլտվությունը՝ այն պայմանով, որ դպրոցում քրիստոնյա եւ մահմեդական բնակչության արական սեռի երեխաները պետք է ստանային տեղական լեզվի գրագիտությանը, իրենց հավատքի աղոթքներին, ռուսաց լեզվին եւ թվաբանությանը վերաբերող նախնական գիտելիքներ: Ի տարբերություն Ռուսաստանում գործող դպրոցների՝ Հայաստանում գործող դպրոցներում՝ այդ թվում եւ Զ. Տեր-Զաքարյանի մասնավոր դպրոցում, սովորում էին Երեւանի բնակչության տարբեր խավերին պատկանող երեխաներ, այսպիսով՝ համաձայն 1853 թ. տվյալների՝ դպրոցի 21 աշակերտներից 4-ը խաների, 6-ը՝ ազնվականների, 4-ը՝ չինովնիկների, 3-ը՝ հոգեւորականների, 2-ը՝ մելիքների, եւ 2-ը՝ հարուստների երեխաներ են եղել: Հետագա տարիներին աշակերտների թիվը նվազել է, ինչի հետեւանքով 1859 թ. դեկտեմբերին դպրոցը դադարել է գործելուց (*Ս. Խուդոյան*, նշվ. աշխ., էջ 288):





Շարունակելի

Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԿՐԱՆՔԸ

1983 թվականի Սուրբ Ծննդյան պահքի զրույցներից

Սկիզբը՝ 2022-ի թիվ 13–14

Կա այդ պահին, երբ նրան (իմա՛ Պետրոս առաքյալին) հանկարծ համակեց ամոթն իր դավաճանության, անհաստատակամության, վախկոտության, անհավատարմության, պարծենկոտության, սարսափելի խոցվեց նրա սիրտը, եւ նա վշտացած հեռացավ: Երբ նա տեսավ Քրիստոսին, Փրկիչը նրան չհարցրեց՝ «Մի՞թե չես ամաչում: Ինչպե՞ս ես կարողանում կանգնել Իմ առջեւ այն բանից հետո, երբ երեք անգամ ուրացար Ինձ»: Քրիստոս նրան այլ հարց տվեց. «Պետրո՛ս, սիրո՞ւմ ես Ինձ ավելի, քան մյուսները (այսինքն՝ Քրիստոսի մյուս աշակերտները)» (հմմտ. Հովհ. ԻԱ 15–19): Այն ժամանակ, երբ ամեն բան վկայում էր, որ Պետրոսը չէր սիրում Քրիստոսին, քանզի ուրացել էր Նրան, մի՞թե կարող էր հարց առաջանալ՝ արդյոք Պետրոսը սիրո՞ւմ է Նրան: Կամ՝ մի՞թե հնարավոր էր խոսել այն մասին, որ Պետրոսն իբրեւ ունակ էր սիրել Քրիստոսին մյուս աշակերտներից առավել. չէ՞ որ մյուսները չէին ուրացել Նրան: Ճիշտ է՝ փախել էին, բայց գոնե չէին ուրացել: Եթե՞ միայն հիշեր Պետրոսը Քրիստոսի խոսքը, որ Նա ասել էր մեկ այլ առիթով. «Ում շատ է ներվում, նա շատ է սիրում» (հմմտ. Ղուկ. Է 47): Ում շատ է ներվում, նրա մեջ ավելի մեծ սեր է ծնվում, քան մյուսի մեջ, ում սակավ է ներվել: Հարցադրումն այս է. «Դու առավել մեծ մեղք ես գործել, քան մյուսները, եւ դա քեզ կարող է ներվել. քո սերը համարժեք կլինի՞ այդ ներմանը: Դրան ի պատասխան կսիրե՞ս դու առավել, քան որեւէ այլ մեկը, որ քեզանից ավելի քիչ է մեղանչել»: Խոսքը սիրո մասին է, քանի որ Աստված խորությամբ է տեսնում մարդուն եւ ո՛չ մակերեսորեն, ո՛չ թվացյալ կերպով, ինչպես որ մենք ենք տեսնում: Երբ մարդը կատարում է այս կամ այն արարքը, ասում է այս կամ այն խոսքը, մենք ըստ մեր պատկերացման ենք ընկալում տվյալ արարքը կամ խոսքը: Քրիստոս տեսնում է խորքը եւ գիտի՝ ով է կանգնած արարքի կամ խոսքի հետեւում: Նա չի խաբվում ո՛չ թվացյալին եւ ո՛չ անգամ տեսանելիին: Այդ իսկ պատճառով Նա տեսնում է Պետրոսի խորհուրդները, որոնք ինչ-որ պահի պարուրվել էին սարսափով, սակայն որոնք վերստին բացվեցին, երբ ամոթն այրեց նրան, ու նա հանկարծ հայտնվեց սեփական խղճի եւ Փրկչի հայացքի առջեւ: Եվ Պետրոսը, որ այդ պահին ցնծությամբ էր լցված, քանի որ դարձյալ Քրիստոսի հայացքի առջեւ էր, եւ հնարավոր էր հաշտեցումը, հնարավոր էր ամեն բան՝ անգամ հարությունը՝ վերադարձը մահվան անդունդից, ասում է Քրիստոսին. «Այո՛, Տե՛ր, եւ Դու գիտես, որ սիրում եմ Քեզ» (Հովհ. ԻԱ 15): Քրիստոս երեք անգամ հարցնում է նրան այդ սիրո մասին. այնպես, ինչպես Պետրոսը երեք անգամ ուրացել էր Իրեն: Եվ երրորդ անգամ, վերջապես, Պետրոսը վերադառնում է մեկ այլ իրականության. ո՛չ այն խոր զգացմունքին, որ բնակվում էր նրա մեջ եւ Քրիստոսի նկատմամբ նրա ունեցած սիրո վերջնական էությունն էր: Նա վերադառնում է այն գիտակցմանը, որ իր սերը թաքույց է, իսկ դավաճանությունը՝ ակնհայտ: Եվ նա դիմում է Քրիստոսին եւ ասում. «Տե՛ր, Դու ամեն ինչ գիտես: Դու գիտես, որ Քեզ ուրացա, բայց ահա հարցնում ես սիրո մասին: Նշանակում է՝ Դու գիտես, որ ամեն դեպքում ես սիրում եմ Քեզ.... Այո՛, ես սիրում եմ Քեզ» (հմմտ. Հովհ. ԻԱ 17): Եվ ահա այն պահը, երբ ավարտվում է ապաշխարությունը: Մեղքը գործված է, եղել է անկում, մարդը վերջնականապես անարգել է ինքն իրեն. նրա խիղճը, Աստծու հայացքն են հայտնել նրան այդ մասին: Եվ նա արձագանքում է այդ հայացքին, խղճի այդ դատաստանին եւ մեծ նողկանք զգում ինքն իր հանդեպ ու.... արտասվում: Իսկ այժմ նրան նորոգում է Աստծու սերը: Ինքդ քեզ ներելն անհնար է: Որեւէ մեկը իրավացի չէ՝ ասելով. «Ես մեղք գործեցի, ես անօրինություն արեցի մարդու հետ շփվելիս, ես նետեցի ինձ աղտեղության մեջ, սակայն դա անցյալում է, այժմ ես կարող եմ մոռանալ այդ մասին»: Դա կնշանակեր «օրինականացնել» սեփական մեղքը, կարծես բարձրաձայնել ինքդ քեզ, Աստծուն՝ քո մերձավորին ու կյանքին անարժան լինելու սեփական համոզմունքը: Այդ իսկ պատճառով մարդը երբեք չի կարող ներել ինքն իրեն. նա չունի ինքն իրեն ներելու իրավունք: Սակայն մյուս կողմից (դա եւս կարեւոր է)՝ մարդը պետք է պատրաստ լինի ընդունելու այն ներումը, որ շնորհվում է իրեն: Մենք իրավունք չունենք չընդունելու, մերժելու այն, հրաժարվելու այն ներումից, որն Աստված կամ մարդը շնորհում է մեզ, եւ միշտ շնորհում է ինչ-որ արժեքով: Երբ մեզանից վիրավորված մեկը, ցավ ապրած լինելով ու տառապանքի միջով անցնելով, ասում է մեզ՝ «Թող որ այժմ խաղաղություն լինի մեր միջեւ: Քո պատճառած վերքը սպիացել է, ցավն՝ անցել: Այդ վերքը կարող էր սպանել ինձ, բայց Աստծու ողորմությամբ ես ողջ մնացի: Եվ ես քեզ սիրում եմ այնքան, որ տամ քեզ այն խաղաղությունը, որ Տերը դրել է իմ հոգում», այդ դեպքում մենք պետք է հաշտվենք եւ ընդունենք ներումը:

Ներումն ընդունելուն մեզ հաճախ խանգարում է մեր հպարտությունը. «Ինչպե՞ս կարող եմ ես ներումն ընդունել՝ այդպիսով ընդունելով, որ ես իսկապես մեղավոր եմ. ընդունելով, որ ինքս ինձ համար որեւէ բան չեմ կարող անել, եւ միայն այն մարդը, որին ես նվաստացրել, վիրավորել եմ, միայն նա կարող է «վերականգնել» ինձ իմ մարդկային արժանիքներով: Ինչպե՞ս կարող եմ ես այդ աստիճանի կախման մեջ լինել որեւէ մեկից: Երբեմն ներումն ընդունելը շատ դժվար է լինում հենց այդ հպարտության պատճառով, հենց այն պատճառով, որ չենք ցանկանում մեր մեջ վերականգնել մարդկային այդ արժանիքները օտար ողորմության շնորհիվ: Մենք ցանկանում ենք այդ արժանիքներն ունենալ մեր մեջ կամ սեփական ուժերով ձեռք բերել դրանք: Սակայն որեւէ մեկը երբեւէ չի կարող ձեռք բերել ինքն իրեն ներելու իրավունքը ճիշտ այնպես, ինչպես որ սիրվելու իրավունքը: Իսկ ահա լինել ներված նշանակում է՝ ինչ-որ մեկը քեզ այնքա՛ն է սիրել, որ «վերցրել է» քո մեղքն ու այն վերապրել իր մեջ: Դրա համար պետք է պատրաստ լինել հաշտվելուն, կատարյալ նվաստացումն ընդունելուն: Եվ երբ կարողանանք ողջ սրտով, ողջ գիտակցությամբ ընդունել այն, այդժամ միայն կկարողանանք բժշկված լինել: Այդպես Քրիստոս բժշկեց Պետրոս առաքյալին, այսինքն՝ «ամբողջականությունը» վերադարձրեց նրան, ով իր ուրացումով ջարդուփշուր էր եղել: Նա ասես ի մի հավաքեց այդ կտորները եւ մնացորդներից ստեղծեց ամբողջական, միակուռ մարդ: Եվ ահա Պետրոսը կարողացավ այդպես վստահ, ինչպես հավասարը՝ հավասարի, խոսել Քրիստոսի հետ: Երբ Քրիստոս նրան ասաց՝ «Արի՛ Իմ հետեւից» (Հովհ. ԻԱ 19), Պետրոսը գնաց, բայց շրջվելով՝ մի փոքր հեռվում տեսավ Հովհաննեսին եւ հարցրեց Փրկչին. «Իսկ նա՞.... Դու ինձ կյանք վերադարձրիր: Հույս չկա՞, որ նրան եւս կյանք կվերադարձնես»: Այդ ժամանակ Փրկիչը խիստ պատասխանեց. «Թե Ես ինչպես կվարվեմ նրա հետ, Իմ գործն է: Դու միայն արի՛ Իմ հետեւից....» (հմմտ. Հովհ. ԻԱ 20–22): Եվ Նա նույնն ասում է մեզանից յուրաքանչյուրին, եթե միայն մենք անցել ենք այդ այրող ապրումների միջով, վառվել ամոթից, ընդունել ենք, հաշտվել այն անասելի ցավի հետ, որը մեզ պատում է, երբ գիտակցում ենք մեր մեղսալիությունը:

Եվ ահա բերկրանքը՝ ապաշխարության բերկրանքը: Հայր Սոֆրոնիայի գրքում Սիլուան ծերունու մասին մի պատմվածք կա. Սիլուանը դեռ երիտասարդ էր, երբ իր համագյուղացիներից մեկը սպանություն է գործում, բանտ նետվում, կրում իր պատիժը: Ապագա կրոնավորը՝ Սիլուանը, գյուղական տոնակատարության ժամանակ տեսնում է, թե այդ ամենից հետո ինչպես է այս մարդը հարմոն նվագում եւ պարում: Սիլուանը սարսափում է. մոտենում նրան եւ ասում. «Ինչպե՞ս ես դու կարողանում պարել, ուրախանալ, չէ՞ որ դու մարդ ես սպանել»: Իսկ մարդասպանը պատասխանում է նրան. «Այո՛, բայց երբ ես բանտում էի, խորապես զղջացի եւ հանկարծ զգացի, որ Քրիստոս ներել է ինձ, եւ ես այժմ նոր արարած եմ»: Սա ապաշխարության ավարտն է՝ նոր կյանքը, նորոգությունը, վեհության ծնունդը... թո՛ղ որ միայն մասնակի, թո՛ղ որ միայն սկիզբը հավիտենական կյանքի՝ սիրո միջոցով մարդուն լիովին հնազանդեցնող հավիտենական կյանքի:

Հաճախ է պատահում, երբ որեւէ մեկը մոտենում է ինձ խոստովանության համար եւ ասում. «Չգիտեմ՝ ինչ պետք է խոստովանեմ, ամեն բան նույնն է....»: Այս խոսքերը վկայում են կյանքի նկատմամբ ուշադրության հանցավոր բացակայության մասին: Մի՞թե մեզանից որեւէ մեկը կարող է ասել, որ ինքն արել է այն ամենը, ինչ հնարավոր էր, եւ եղել է նա, ով կարող էր լինել. որ ինքն անհերքելիորեն անբասիր է եղել իր մտքում եւ զգացմունքներում, բաց չի թողել գեթ մեկ արարք, որը կարելի էր կամ պետք էր կատարել, որ չի արել որեւէ բան, ինչն անկատար է եղել: Ո՞վ կարող է ասել, որ իր մտքերը չեն խճճվել, չի մթագնել իր սիրտը, կամքը չի տատանվել, չեն եղել անարժան արարքներ կամ ցանկություններ: Եթե մարդը կարող է գնալ խոստովանության եւ ասել՝ «Չգիտեմ՝ ինչ ասել», նշանակում է, որ նա երբեք չի մտածել այն մասին, թե ինքն ինչպիսին կարող էր (եւ ուրեմն պե՞տք է) լինել, այլ միայն համեմատում է ինքն իրեն նախորդ օրվա կամ այլ մարդկանց հետ, որոնք նույնպես մեղավոր են, ինչպես որ ինքը:

Իսկ երբ ասում ենք՝ «Ահա՛ տարեցտարի գալիս եւ կրկնում ենք միեւնույն բանը», դրանից հետեւում է, որ մենք երբեք չենք զգացել ո՛չ ամոթ, ո՛չ ցավ եւ լիովին հանգիստ ենք ընդունում մեր մեղանչականությունը: «Այո՛, ես ստում եմ, բայց բոլո՛րն են ստում, անօրինություններ եմ գործում, բոլորն էլ գործում են, մոռանում եմ Աստծուն, իսկ որտե՞ղ հիշեմ: Անցնում եմ մարդկանց կողքով, որոնք ապավինել են ինձ, սակայն ինչպե՞ս կարելի է կանգ առնել յուրաքանչյուրի մոտ, եւ այսպես շարունակ....»: Եթե միայն գեթ մեկ անգամ կարողանայինք տեսնել (ինչպես որ Աստված է տեսնում) հետեւանքն այն ամենի, ինչ մենք ենք գործում, կամ այն ամենի, ինչ չենք գործում, եթե միայն կարողանայինք տեսնել, թե ինչպես է ասված կամ չասված խոսքը, գործված կամ չգործված արարքը մեկ այլ մարդու կյանքում իրադարձությունների մի ամբողջ շարքի սկիզբ հանդիսանում, եթե միայն տեսնեինք, թե որքա՛ն ճակատագրական է լինում մեկի կյանքում մեկ այլ մարդու խոսքը կամ ակնթարթային շարժը.... Բայց եթե այսչափ անուշադիր ենք ինքներս մեր հանդեպ, ուրեմն որքա՛ն առավել անտարբեր ենք այլոց նկատմամբ, չնայած որ այն, ինչ կատարվում է նրանց հետ, տեղի է ունենում հենց մեր կողքին: Այդ պատճառով միշտ գալիս եւ ապաշխարում ենք նույն բանի համար, քանզի որեւէ անգամ չենք նկատում, որ այս կամ այն երեւույթը խեղել է մեզ, որ այլեւս նման չենք մեր հոգու խորքում դրոշմված Աստծու պատկերին: Մեզ ասես մի սրբապատկեր է տրված պահպանելու համար, իսկ մենք այն անընդհատ փչացնում, անարգում, ապականում ենք՝ կա՛մ մեր անփութության, կա՛մ չարության որեւէ պոռթկումի պատճառով՝ ո՛չ բուռն, այլ փոքր, աննշան չարության....

Երբեմն մարդն ասում է. «Ես չեմ կարողանում ազատվել իմ մեղքերից: Եթե ես մի որեւէ մեծ մեղք գործեմ, հնարավոր է՝ ցնցվեմ, բայց իմ բոլոր փոքր մեղքերը նստում են փոշու նման, բայց չեն տանջում: Ընտելանում եմ դրանց այնպես, ինչպես ընտելանում են անկանոն կահավորանքով բնակարանում ապրելուն....»: Եվ ինքներս մեզ հաշիվ չենք տալիս, որ երբեմն աննշան [թվացող] մեղքերի որեւէ քանակ վերացնելն ավելի դժվար է, քան մեկ մեծ մեղքը, որովհետեւ այդ մեծ մեղքը, հիրավի, կարող է մեզ այնպես ցնցել, որ անգամ արթուն մնալ չկարողանալու մեր տկարությամբ հանդերձ՝ մենք կարթնանանք: Իսկ մեր առօրյա մեղքերը.... Վորոնեժի նահանգի ճգնակենցաղ կրոնավոր Ալեքսեի կյանքից մի պատմություն կա: Նրա մոտ երկու կին են գնում, որոնցից առաջինը տանջվում էր իր գործած մի սարսափելի մեղքի գիտակցումից, իսկ մյուսը հառաչում. «Մեղավոր եմ, ինչպես բոլորը: Չէ՞ որ գիտեք, տե՛ր հայր, հնարավոր չէ ապրել ու չմեղանչել»: Եվ կրոնավորը նրանց ակնհայտ ցույց է տալիս՝ ինչ է դա նշանակում: Նա երկուսին էլ ուղարկում է դաշտ: Մահացու մեղք գործած կնոջը պատվիրում է փնտրել ամենածանր քարը, որ վերջինս կկարողանար բարձրացնել ու տանել իր մոտ: Իսկ երկրորդ կնոջը պատվիրում է գոգնոցի մեջ որքան հնարավոր է շատ փոքրիկ քարեր հավաքել: Երբ կանայք վերադառնում են, կրոնավորը պատվիրում է նրանց մեծ եւ փոքր քարերը վերադարձնել իրենց տեղերը: Կանանցից առաջինն ուղիղ գնում է այն տեղը, որտեղից վերցրել էր քարը (քարի հետքը մնացել էր հողի վրա), դնում է այն իր տեղում եւ վերադառնում: Մյուս կինը ժամերով շրջում է եւ չի կարողանում հիշել, թե որտեղից է վերցրել այս կամ այն քարը: Այդպիսով կրոնավորը ցույց է տալիս, որ չի կարելի անփութությամբ վերաբերվել այն ամենին, ինչն աննշան է թվում, բայց ինչից որեւէ կերպ չես կարող ձերբազատվել: Եվ փոքր բաներին անփութորեն վերաբերվելուն ընտելանալով՝ սովորում ենք առհասարակ անփույթ լինելուն եւ սկսում ենք ավելի ու ավելի մեղանչել, այսինքն՝ ավելի ու ավելի այլանդակել ինքներս մեզ եւ մեր մեջ ոչնչացնել, խորտակել ու անարգել Աստծու պատկերը:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19 – 2023-ի թիվ 1

Նամակ քսանմեկերորդ
ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ [Բ մաս]

Գիտության մեջ շատ կարեւոր է գտնել հայտնաբերված երեւույթի անհրաժեշտ նշանակումը՝ եզրույթը: Շատ հաճախ դա նշանակում է ամրագրել կատարված հետազոտությունը կամ ընդհանրացումը, այն նկատելի դարձնել գիտության մեջ, ներմուծել գիտություն, ուշադրություն առաջացնել դրա նկատմամբ:

Եթե ցանկանում եք, որ ձեր հետազոտությունը մտնի գիտության մեջ, կնքեք այն՝ դրան տվեք անուն, անվանում: Գիտություն ներմուծելով ձեր գործը՝ այն ներկայացրեք գիտական հանրությանը, իսկ դրա համար այն անվանակոչեք եւ որեւէ բան մի՛ թողեք անանուն: Բայց դա շատ հաճախ մի արեք: Լեզվաբանական կամ գրականագիտական որոշ նոր աշխատություններ գերհագեցած են նոր եզրաբանությամբ: Գիտնականին կյանքի ընթացքում բավական է միայն երկու-երեք նոր եզր ստեղծելն իր հայտնաբերած նշանակալից երեւույթների համար:

Նյուտոնը ոչ այնքան հայտնաբերեց ձգողականության օրենքը (բոլորը նրանից առաջ արդեն իսկ գիտեին, որ առարկաները գետնին են ընկնում, իսկ դրանք գետնից պոկելու համար անհրաժեշտ է որոշակի ջանք գործադրել), որքան ստեղծեց եզրույթը՝ բոլորին հայտնի երեւույթը նշանակելու համար, եւ հենց դրանով ստիպեց «նկատել» իրեն գիտության ասպարեզում:

Նոր նշանակումի՝ նոր եզրի ստեղծման սովորական ուղին փոխաբերության գործածումն է: Փոխաբերություն կլինեն նաեւ ինչ-որ հարակից ոլորտից, այլ բնույթի գիտությունից փոխառված բառերը:

Իհարկե, որեւէ փոխաբերություն եւ որեւէ պատկեր, ելնելով սկզբնական բազմիմաստությունից, չի կարող լիովին ճշգրիտ լինել, լիակատար արտահայտել երեւույթը: Ուստի սկզբում նոր եզրույթը միշտ մի քիչ անհաջող է թվում: Միայն այն դեպքում, երբ փոխաբերությանը, պատկերին ամրագրվի մեկ ճշգրիտ իմաստ, հետազոտողները դրան «կսովորեն», նոր եզրի հիմքում ընկած պատկերը կկորցնի իր սրությունը, եզրույթը կիրառության մեջ կմտնի եւ նույնիսկ, կարող է պատահել, թվա հաջող:

Ճշգրիտ գիտական իմաստը «կծլարձակի» պատկերի միջից: Նախ՝ նոր գիտական եզրույթի դեպքում պատկերն ասես թե ծածկում է ճշգրիտ իմաստը, ապա ճշգրիտ իմաստն է սկսում ծածկել պատկերը:

Ճշգրիտ պետք է լինի հենց գիտնականի հետազոտությունը՝ վառ կերպով սահմանագծված եւ յուրահատուկ հենց այն երեւույթը, որը նշանակվում է նոր եզրույթով, այդ դեպքում ճշգրիտ կդառնա նաեւ եզրը:

Այն դեպքերում, երբ գիտնականը կարող է կամ նույնիսկ պետք է դիմի փոխաբերության, պատկերի, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց «նյութական» իմաստին: ԺԹ դարի մի բարձրուսյալ գրականագետի երկերից մեկում կարդում ենք այսպիսի արտահայտություն. «Դանթեն մի ոտքով ամուր կանգնած էր միջնադարում, իսկ մյուսով ողջունում էր վերածննդի արշալույսը...»: Սրամիտ եւ դիտունակ պատմաբան Վ. Օ. Կլյուչեւսկին այսպես է ծաղրանմանակել այս արտահայտությունն իր «Դասախոսություններ ռուսաց պատմության դասընթացի համար» երկում. «Ցար Ալեքսեյ Միխայլովիչը բարենորոգչական շարժման մեջ դիրք ընդունեց.... մի ոտքով նա դեռեւս ամուր հենվում էր հայրենի ուղղափառ երկրին, իսկ մյուսն արդեն գրեթե դուրս էր բերել դրա սահմանագծից, սակայն այդպես էլ մնաց այս անվճռական անցումային դիրքում»:

Այստեղ պատկերը ծաղրանմանակվում է: Ծաղրանմանակումն արդարացված է, քանի որ երկու դեպքում էլ խոսքը մեծագույն անցումային փուլերի մասին է. մեկը՝ Արեւմտյան Եվրոպայի, մյուսը՝ Ռուսաստանի պատմության: Սակայն ցար Ալեքսեյ Միխայլովիչը Դանթե չէ, եւ նրա վրա արժեր ծիծաղել:

Նույն Վ. Օ. Կլյուչեւսկու գործերում, սակայն, կարող ենք հանդիպել նաեւ անհաջող արտահայտությունների, պատկերների. «Այս տեսակետը.... քննադատը չէր կարող ամբողջականորեն արտահայտել՝ այն ներկայացնելով մաս առ մաս՝ բեկորներով»: «Բեկորներով» որեւէ բան չի կարելի ներկայացնել: Սակայն եթե ձգտենք պահպանել «բեկորների» պատկերը, ապա արտահայտությունը հեշտությամբ կարելի է ուղղել այսպես. «Նրա մտքերն ապակու պես մաքուր ու պարզ էին, բայց դրանք ներկայացնում էր թերի՝ ասես թե բեկորներով»: Պետք է միշտ ուշադրություն դարձնել պատկերի պատշաճությանն ու իմաստավորությանը: Խորհրդային պատմաբան Բ. Դ. Գրեկովը Նովգորոդի մասին իր աշխատության մեջ գրել է. «Կիրակի օրը Վոլխովում ավելի շատ առագաստներ կան, քան սայլեր՝ շուկայում....»: Եվ դա իմաստավոր է նրանով, որ ընդհանուր բովանդակային առմամբ խոսքը հենց առեւտրի մասին է:

Չի կարելի պարզապես «գեղեցիկ» գրել: Պետք է գրել ճշգրիտ եւ իմաստալից՝ արդարացված դիմելով պատկերներին:

Ռուսաց լեզվի մեծ վարպետ պատմաբան Վ. Օ. Կլյուչեւսկին կարողանում էր չլղոզել իր միտքը՝ այն ներկայացնելով երբեմն միայն ակնարկով՝ դիմելով մի տեսակ ոճական խորամանկության, որը երբեմն ավելի ուժեղ էր գործում, քան ամենավառ պատկերը: Համեմատեք նրա հետեւյալ արտահայտությունները. «Գիտությունների ակադեմիային կից համալսարանում (խոսքը վերաբերում է ԺԸ դարին՝ *Դ. Լ.*) դասախոսություններ չէին կարդում, սակայն ուսանողներին ծեծում էին», կամ՝ Պետրոսի ժամանակների մասին. «Գանձարանագողությունը եւ կաշառակերությունը հասան այնպիսի մեծ չափերի, որոնք չէին եղել նախկինում, թերեւս միայն դրանից հետո...»: Ցար Ալեքսեյ Միխայլովիչի բանաստեղծություններ հորինելու մասին նա իսկ գրում է. «Պահպանվել են նրա գրած մի քանի տողեր, որոնք հեղինակին կարող էին բանաստեղծություններ թվալ»:

Վ. Օ. Կլյուչեւսկին նաեւ հակադրության վարպետ էր: Ահա մի քանի օրինակ. «Անձնական ազատությունը դառնում էր պարտադիր եւ պահպանվում էր մտրակով». սա Պետրոս Ա-ի դարաշրջանի մասին է: Կամ՝ Եվգենի Օնեգինի երեւակայական նախնու մասին. «Նա (այդ «նախնին»՝ *Դ. Լ.*) ջանում էր դառնալ յուրային օտարների մեջ եւ միայն դառնում էր օտար յուրայինների մեջ»: Վերջին դեպքում մեր առջեւ խաչաձեւ հակադրություն է, որին Կլյուչեւսկին նույնպես գերազանց տիրապետում էր: Ահա նրա խաչաձեւ հակադրության մի այդպիսի օրինակ՝ անմիջական առնչություն ունեցող մեր նյութին. «Դյուրին գործ է բարդ գրելը եւ խոսելը, սակայն դյուրին գրելը եւ խոսելը բարդ գործ է»:

Խոսելով գիտական եզրույթների մասին՝ պետք է հիշել նաեւ եզրերի առանձնահատուկ դերի մասին պատմագիտության մեջ, երբ գիտական հասկացության համար վերցվում է հին բառ կամ ամբողջական արտահայտություն: Հնաբանությունները, սեփական աշխատություններ ամբողջական արտահայտություններ, մեջբերումներ ներմուծելը միանգամայն օրինական են պատմաբանների շրջանում, քանի որ կյանքի հին երեւույթները լավագույնս արտահայտվում են հենց հին լեզվում: Բայց դարձյալ՝ դա չպետք է չարաշահել:

Լավ է, երբ պատկերն աստիճանաբար բացվում է եւ բազմաթիվ արտացոլումներ ունի նկարագրվող երեւույթի մեջ, այսինքն՝ երբ պատկերը շատ կողմերով առնչակցվում է նկարագրվող երեւույթի հետ: Բայց երբ այն պարզապես կրկնվում է (նույնիսկ ոչ միշտ ուղիղ ձեւով), դա վատ է: Կլյուչեւսկու երկերում մի տեղ ասվում է, որ պոլովեցյան կեռ սուրը բարձրացված էր Ռուսիայի վրա, իսկ մի փոքր հետո՝ այն մասին, որ կեռ յաթաղանը բարձրացված էր Եվրոպայի վրա: Ոչ բոլորովին ճշգրիտ եւ հաջող պատկերը կրկնության պատճառով դառնում է միանգամայն անտանելի, թեկուզ եւ փոփոխված ձեւով:

Ճոռոմաբանությունները հակված են կրկին ու կրկին դուրս լողալու առանձին հեղինակների տարբեր հոդվածներում եւ աշխատանքներում: Այսպես՝ արվեստաբանների գործերում հաճախ կրկնվում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «զրնգուն գույն», «խլացված երանգավորում» եւ այլ «մեղեդայնություն»: Վերջին ժամանակներում արվեստաբանական քննադատության մեջ նորաձեւ է դարձել «առաձգական» ածականը. «առաձգական ձեւ», «առաձգական գիծ», «առաձգական հորինվածք» եւ նույնիսկ «առաձգական գույն»: Այս ամենը, իհարկե, լեզվի աղքատությունից է, այլ ոչ թե այն պատճառով, որ «առաձգական» բառն առանձնահատուկ է:

Գլխավորը՝ անհրաժեշտ է ձգտել նրան, որ արտահայտությունը միանգամից ճիշտ ընկալվի: Դրա համար մեծ նշանակություն ունեն բառերի դասավորվածությունը եւ հենց արտահայտության սեղմությունը: Օրինակ՝ իմ «Մարդը Հին Ռուսիայի գրականության մեջ» (2-րդ հրատ., 1970) աշխատության 79-րդ էջում տպված է. «Ահա թե ինչու Ստեփանոս Պերմեցուն անվանում է Եպիփանես Իմաստունը «առնական արի»....»: Արտահայտությունը երկիմաստ է: Բառերի այլ դասավորվածությունն անմիջապես կուղղեր այն. «Ահա թե ինչու է Ստեփանոս Պերմեցին անվանվում «առնական արի» Եպիփանես Իմաստունի կողմից....»: Կամ ավելի լավ է այսպես. «Ահա թե ինչու է Եպիփանես Իմաստունը Ստեփանոս Պերմեցուն անվանում «առնական արի»....»:

Ընթերցողի ուշադրությունը պետք է կենտրոնացած լինի հեղինակի մտքի, այլ ոչ թե այն բանի բացահայտման վրա, ինչը հեղինակը ցանկանում էր ասել: Ուստի որքան պարզ, այնքան լավ է: Պետք չէ վախենալ միեւնույն բառի, միեւնույն դարձվածքի կրկնությունից: Նույն բառը կողք կողքի չկրկնելու ոճական պահանջը հաճախ ճիշտ չէ: Այս պահանջը չի կարող կանոն լինել բոլոր դեպքերի համար: Լեզուն, անշուշտ, պետք է լինի հարուստ, ուստի տարբեր երեւույթների ու հասկացությունների համար պետք է տարբեր բառեր գործածել: Միեւնույն բառը տարբեր իմաստներով գործածելը կարող է շփոթություն առաջացնել: Դա չպետք է անել: Սակայն, եթե խոսվում է միեւնույն երեւույթի մասին, բառն օգտագործվում է միեւնույն իսկ իմաստով, ապա այն փոխելու կարիք ամենեւին չկա: Իհարկե, լինում են բարդ դեպքեր, որոնք հնարավոր չէ կանխատեսել որեւէ խորհրդով: Պատահում է, որ միեւնույն հասկացությունը (հետեւաբար՝ միեւնույն իսկ բառը) գործածվում է հենց մտքի աղքատության պատճառով: Այդ դեպքում, հասկանալի է, եթե անհնար է բարդացնել միտքը, ապա անհրաժեշտ է ոճականորեն օգնել մտքին՝ բառերով այլաձեւելով անիմաստ պտտվող միտքը: Լավագույնը մտքին հենց մտքով օգնելն է, այլ ոչ թե նվազամտությունը բառերով քողարկելը:

Նախադասության կշռույթայնությունը (ռիթմիկությունը) եւ դյուրընթեռնելիությունը: Մարդիկ, կարդալով, մտովի արտասանում են շարադրանքը: Այն պետք է հեշտ արտասանվի: Իսկ այս դեպքում գլխավորը բառերի դասավորությունն ու արտահայտության կառուցումն է: Պետք չէ չարաշահել ստորադասական նախադասությունները: Ձգտեք գրել կարճ նախադասություններով՝ հոգալով այն մասին, որ նախադասությունից նախադասություն անցումը թեթեւ լինի: Գոյական անունը (թեկուզ եւ կրկնվող) ավելի լավ է, քան դերանունը: Խուսափեք «վերջին դեպքում», «ինչպես վերեւում ասված է» եւ այլ արտահայտություններից:

Զգուշացեք դատարկ պերճախոսությունից: Գիտական աշխատության լեզուն պետք է լինի թեթեւ, աննկատ. նրանում պերճանքներն անթույլատրելի են, իսկ նրա գեղեցկությունը չափի զգացողության մեջ է:

Իսկ ընդհանուր առմամբ անհրաժեշտ է հիշել. չկա միտք, որը չի արտահայտվում լեզվում, եւ բառի որոնումը, ըստ էության, մտքի որոնում է: Լեզվի անճշտություններն ամենից առաջ բխում են մտքի անճշտությունից: Ուստի գիտնականը, ճարտարագետը, տնտեսագետը՝ ցանկացած մասնագիտության տեր մարդ, երբ գրում է, պետք է հոգա նախ եւ առաջ մտքի ճշգրտության մասին: Մտքի խիստ համապատասխանությունը լեզվին տալիս է ոճի թեթեւություն: Լեզուն պետք է լինի պարզ (հիմա ասում եմ սովորական եւ գիտական, ոչ թե գեղարվեստական գրականության լեզվի մասին):

Լեզվի թեթեւությունը լինում է կեղծ. օրինակ՝ «գրչի ճարտարությունը»: «Ճարտար գրիչը» անպայման չի ենթադրում լավ լեզու: Պետք է ինքդ քո մեջ լեզվի ճաշակ մշակես: Վատ ճաշակը կործանում է անգամ տաղանդավոր հեղինակներին:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Ս. Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի ուսուցողական բնույթը

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23

Երգվող հատվածների առկայությունն առավել դյուրին է դարձրել պոեմի ուսուցումը: «Յիսուս Որդի»-ն՝ որպես ուսուցողական-դաստիարակչական նպատակներ հետապնդող պոեմ, համեմատաբար մանրամասն է քննել Գր. Հակոբյանը՝ ուշադրություն դարձնելով նաեւ երկի մարդասիրության ու հայրենասիրության դասերին (*Գ. Հակոբյան,* Ներսես Շնորհալի, Երեւան, 1964, էջ 146):

Ս. Ներսես Շնորհալին եւ նրա հետնորդները հավատը զորացնելու նպատակ ունեին եւ դա անում էին ոչ միայն հանուն եկեղեցու, այլ նաեւ ի շահ հասարակության. *«Նրանք մտածում էին, որ կրոնական պատվիրանների անաղարտ կիրառումը կյանքում կնպաստի մարդկանց փոխհարաբերությունների ընթացքում երեւան բերել բարեկամության ու փոխօգնության, սիրո ու հարգանքի զգացումներ՝ մղելով նրանց կատարելու վերոհիշյալ զգացմունքներից բխող գործողություններ: Հենց այս նպատակին էլ նրանք աշխատել են ծառայեցնել կրոնի բարոյական պատգամները՝ դրանց մեջ տեսնելով հզոր զենք, մի կողմից հասարակական չարիքներն ու արատները մերկացնելու, մյուս կողմից՝ այդ պատգամների դիրքերից հասարակությանը պահանջներ ներկայացնելու համար»* (*Գ. Գրիգորյան,* Հասարակական-փիլիսոփայական միտքը Հայկական Կիլիկիայում, Երեւան, 1979, էջ 85–86): Քրիստոսի կյանքը լավագույն օրինակն էր այդ նպատակի իրագործման համար: Պոեմն ունի երկու գլխավոր հերոս՝ Հիսուս Քրիստոս, որին շարունակ փառաբանում է հեղինակը, եւ հենց ինքը՝ հեղինակը, որ շարունակ մեղադրվում է տարբեր մեղքեր գործելու մեջ: Այսինքն՝ Ս. Գրիգոր Նարեկացու նման Ս. Ներսես Շնորհալին եւս ընդհանրացնում, իր մեջ է խտացնում մարդկության մեղքերը՝ ցանկանալով սեփական անձի օրինակով ցույց տալ ապաշխարության ճիշտ ուղին: Խոստովանությունը դառնում է մարդու փրկության միակ ճանապարհը: Որքան անկեղծ ու սրտանց լինի այդ խոստովանությունը, այնքան փրկության հույսը առավել իրատեսական կլինի:

Ս. Ներսես Շնորհալու պոեմում եւս արտահայտված է հոգու եւ մարմնի հակասությունը: Հոգին որքան էլ վեր է ձգտում, մարմինը նրան ներքեւ է քաշում: Ըստ այդմ՝ գործած մեղքերն էլ երկու խմբի են բաժանվում՝ հոգեւոր ու մարմնական: Չարի դեմ մղվող պայքարում արդեն մեղավոր ծնված մարդը երբեմն անզոր է: Մարդուն անպայման անհրաժեշտ է Աստծու օգնությունն այդ կռվում հաղթելու համար: Մարմնական մեղքերը չափազանց շատ են, ու երբեմն խիստ դժվար է աշխարհիկ գայթակղություններից հեռու մնալը: Ուշագրավ է, որ Ս. Ներսես Շնորհալին չի ժխտում մարմնականը. նա պարզապես հորդորում է մարմնով եւս անաղարտ լինել:

Ս. Գրիգոր Նարեկացին եւ Ս. Ներսես Շնորհալին հանդես են գալիս իբրեւ ամբողջ մարդկության մեղքերի կրողներ, հայցում Աստծու գթությունը ոչ միայն իրենց, այլ նաեւ բոլորի փրկության համար: Ներկայացնելով աստվածաշնչյան այս կամ այն դրվագը՝ Ս. Ներսես Շնորհալին ցույց է տալիս, սովորեցնում է թե դրվատելին, թե պարսավելին՝ հետամուտ լինելով ընթերցողի բարոյակրթմանը: Բազմաթիվ են քննության ենթակա շերտերն ու օրինակները պոեմում, բայց ծավալային սահմանափակումից ելնելով՝ անդրադառնանք մի քանի խիստ բնութագրական հատվածների: Անթվարկելի են մարդկանց մեղքերը. հայհոյություն, մատնություն, նենգություն, խաբեություն, անգթություն, կեղծավորություն, անառակություն, որկրամոլություն, կարեկցանքի բացակայություն, հայրենադավություն, վախկոտություն, անազնվություն: Ս. Ներսես Շնորհալին խնդրում է Հիսուսին բուժել իրեն «զմարմնոյ, զհոգւոյս եւ զոգմըտաց», հեռու պահել տարատեսակ մեղքերից (էջ 90–94).

Զի պարտաւոր հրոյ գեհենին,
Զիս արարի ցասմամբ սըրտին.
Եւ բարկացայ ես ընկերին,
Տարապարտուց շարժեալ յախտին
Աչօք նայիմ ցանկականին
Ի գեղ դիմաց իգականին....
Հեռի արա զբան հերձուածին,
Զհայհոյութիւնն անններելին,
Եւ զսրտրտունջն ընդ բամբասին,
Զգբրթմընջիւն ընդ շոգմոգին.
Զխաբէութիւնն առ ընկերին,
Եւ զմատնութիւն նենգաւորին.
Զերդմանըն բանն երդմնահարին,
Զսուտ խօսելն, որ է չարին....

Ինչպես իր այլ երկերում եւ գրվածքներում, այստեղ եւս Ս. Ներսես Շնորհալին անդրադառնում է հասարակական խնդիրներին, ցույց տալիս դրանց պախարակելի կողմերը: Իր օրինակով ներկայացնում է բարձրաշխարհիկներին, որոնց հետ վայելել է անցավոր կյանքի բարիքները. հագել է շքեղ հագուստներ, բայց թաքցրել է իր ունեցվածքը, մշտապես եղել է խնջույքներում՝ վայելելով բազմատեսակ կերակուրներ ու գինի: Սակայն Աստծու պարգեւած բարիքներից որեւէ մեկին բաժին չի հանել, ուստի հորդորում է (էջ 144).

Թէ մեծատանց, որ յաշխարհի
Սա առ ի խրատ բոլորովին,
Մի՛ պարարեր որդանց զմարմին,
Այլ փոքր ինչ տալ եւ աղքատին:

Տպավորիչ է վերջին դատաստանի պատկերը, որտեղ հեղինակը ընդգրկուն տալիս է քննադատելի մեղքերի ամբողջ պատկերը (էջ 198–200).

Անդ թագւորք ոչ երեւին,
Եւ ոչ իշխանքք պատուեսցին.
Ոչ մեծամիտք հըպարտասցին,
Եւ ոչ հըզօրքք բարձրասցին....
Եւ մեծատունք ունայնասցին.
Լեզուք ճարտարք անդ համրասցին,
Եւ հայհոյիչքըն կարկասեցին....
Եւ ի գողոց գողունք խընդրին....
Անդ եւ սպանողքըն պատժեսցին....
Եւ բորբոքեալքն ի բոց ախտին
Պոռնիկքն անշէջ հըրով տանջին....
Որք յերգարանս գինեաւ լըկտին
Եւ պակշոտեալ ծաղու լըցցին,
Լան եւ ողբան ի գեհենին....

Այսպես շարունակվում է մեղքերի թվարկումը. կպատժվեն նրանք, ովքեր դավաճանել են իրենց կողակցին, որեւէ բան վաճառելիս դիմել են խարդախության, ովքեր ոխակալ են, հայհոյող ու նախանձ, գող ու մարդասպան: Հեղինակը հատուկ անդրադառնում է դատավորներին, որոնք անարդար են դատում աղքատներին: Ս. Ներսես Շնորհալին քրիստոնեական բարոյախոսության տեսանկյունից է ներկայացնում, թե ովքեր եւ ինչ մեղքեր են ենթակա պատիժների, սակայն սա նրա ժամանակաշրջանի կյանքի, մարդու, նրա ապրելակերպի ու արատների պատկերն է: Վերոնշյալները ոչ թե վերացական մեղքեր են, որոնցից հեռու պետք է մնա յուրաքանչյուրը, այլ հասարակության ու նրա ապականված բարքերի իրական պատկերն են: Մարդկության մեղքերն իր վրա վերցնելով, դրանց պախարակելի ու պատժելի լինելը մատնանշելով, ապաշխարելով եւ, ի վերջո, անխուսափելի պատժի սպառնալիքով՝ Ս. Ներսես Շնորհալին ցանկանում էր իր օրինակով սովորեցնել մեղքերից հրաժարումի, հասարակության դաստիարակման ճիշտ ճանապարհը:

Ս. Ներսես Շնորհալու ստեղծագործությունը վերլուծելու, դրա ուսուցողական-դաստիարակչական բնույթը վերհանելու համար կարեւոր, ծրագրային նշանակություն ունի պոեմի վերջին հատվածը՝ «Յիշատակարան»-ը: ԺԲ դարում Ս. Ներսես Շնորհալին խոստովանում է՝ պոեմը գրել է, որ ժողովուրդն ազատ ժամանակ կարդա, չտրվի աշխարհիկ հաճույքներին (էջ 220).

Ըստ այսմ եւ ես նըկարեցի
Զներտաղական բանս ի քարտի,
Ի զուարճութիւն բանասիրի
Եւ բարեմիտ ընթերցողի....

Հեղինակը խոսում է նաեւ պոեմի ստեղծման նպատակի մասին. կարդալով այս ստեղծագործությունը՝ մարդիկ կարթնանան ու կզգաստանան (էջ 214).

Եւ որք արբեալն են թըմբրական,
Ըմպողք գինւոյն յիմարական,
Սովաւ զարթնուն եւ զգաստանան,
Թէ ընթեռնուն մըտառական:

Ինչպես երեւում է «Յիշատակարան»-ից, ժամանակի հոգեւորականները քննադատել ու մեղադրել են Ս. Ներսես Շնորհալուն հանգավոր գրելու համար, քանի որ այդ սկզբունքով ստեղծվել են աշխարհիկ երգերը. *«Կարելի է եզրակացնել, որ կրոնական բանաստեղծության մեջ ոչ զոչման ու արտասվաց եւ ոչ այլ երկերում ընդունված չի եղել հանգավոր խոսքը, այդ խոսքը բնորոշ է եղել միայն արտաքին, այսինքն՝ աշխարհիկ եւ նույնիսկ ավելի որոշակի՝ Ափրոդիտեի, այսինքն՝ սիրո երգերին, մարմնավոր, ախտավոր երգերին: Ահա թե ինչու Նարեկացուց երկու դար անց Շնորհալին ստիպված է լինում կրկին արդարանալ, թե չափով են գրված եւ Սողոմոնի «Երգ երգոցը», եւ այլ կրոնական գործեր»* (*Ժ. Քալանթարյան,* Հայ գրականագիտության պատմություն, Երեւան, 1986, էջ 101): Ս. Ներսես Շնորհալին թեեւ արդարանում է, բայց միաժամանակ հաստատակամ է եւ հավատարիմ իր որդեգրած սկզբունքին (էջ 218).

Զի եթէ սուտն որ ձեւանայ,
Սովաւ այնքան գեղեցկանայ,
Քանի՞ արդեօք վայելչանայ
Ճըշմարտութեան բանն որ ի սմա:

Այնուհետեւ Ս. Ներսես Շնորհալին խոսում է գրողական շնորհի, բանաստեղծի կոչման եւ առաքելության, ընթերցողների մասին: Հեղինակը հրաժարվում է նույն հանգի կիրառությունից՝ դա համարելով ձանձրալի եւ ոչ ախորժելի մարդու փոփոխական բնույթի համար (էջ 220).

Ոմանց տայ բան, որ ոչ չափի,
Բայց զօրաւոր եւ ըստ կարգի.
Այլոց շնորհէ բանըս տաղի,
Զի եւ այնու միտքըն բանի:
Զի բնութիւն մեր է յայտնի,
Արագայագ եւ ձանձրալի....

Այսպիսով՝ պոեմի նպատակներն են եղել՝ մարդկանց զգաստացնելը, նրանց մեջ աստվածային սերն արթնացնելը, Հին եւ Նոր Կտակարաններն ուսուցանելը, հասարակությանը կրթելն ու դաստիարակելը՝ մատնանշելով արատները: Պոեմը մեկ անգամ եւս հաստատում եւ ամրագրում է Հայ Եկեղեցու դավանաբանական սկզբունքները:

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՓԵՏՐՎԱՐ

- † Տոն Ս. Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ տասնչորս զինվորների – *փետրվարի 4*
- † Տոն Սուրբ Ղեւոնդյանց – *փետրվարի 13*
- † Տյառնընդառաջ – *փետրվարի 14*
- † Տոն Սուրբ Վարդանանց զորավարների, հազար երեսունվեց վկաների – *փետրվարի 16*
- † Բուն Բարեկենդան (սկիզբն Մեծ պահքի) – *փետրվարի 19*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.02.2023 թ.
Տպաքանակը՝ 1225